ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5 ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

17/08/2020 - 02/09/2020

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 1 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 1 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

1 կողմ

1 դեմ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5 Ի N 670-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Վարդան Խառատյան 17.08.2020 19:23:58	Որոշման հիմքում պետք է ընկած լինի նախագծում նշված սկզբունքներն ու մեթոդները, որոնք, սակայն, ամբողջությամբ չեն արտահայտում հավասարության և արդարության մոտեցումները: 1. Բանաձևում առկա «դասարանների միջին թիվ» հասկացողությունը տարողունակ է: Սահմանված կարգի համաձայն մեկ դասարանի կազմավորման համար առավելագույն թիվ նշված է 35-ը, 36 աշակերտի դեպքում արդեն անհրաժեշտ է ունենալ երկու դասարան, այսինքն՝ 36 և 70 աշակերտի դեպքում կազմավորվում է երկու դասարան, ինչը հիմնական դպրոցի պարագայում շոշափելի տարբերություն է	Ձեր առաջարկությունն ընդունվել է ի գիտություն: Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված նախագծով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Կենսաթոշակի վճարման կարգը հաստատելու մասին» թիվ 670-Ն որոշման մեջ: Ձեր առաջարկությունները չեն վերաբերվում ներկայացված նախագծին:	

		կազմում: 2. Եթե փոքր համակազմ ունեցող դպրոցներում հասկանալի է մասնագիտացված կրթության աջակցման գծով փոխտնօրենի և միջոցառումների կազմակերպչի բացակայությունը, ապա միանգամայն անընդունելի է, օրինակ, 24 և ավելի դասարան ունեցող կամ 500-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցների պարագայում: 3. Հաստիքին համապատասխան աշխատավարձերի հաշվարկման համար հիմք ընդունած համահավասար սկզբունքը հակասության մեջ է գտնվում «ՀՀ քաղաքացիական ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքների ոգուն եւ տրամաբանությանը: Անընդունելի է տարբեր աշխատանքային ստաժ ունեցող, բայց նույն հաստիք զբաղեցնող քաղծառայողներին վճարել նույն չափի աշխատավարձ: Առաջարկում ենք առաջնորդվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի աշխատավարձերի սանդղակով: 4. Անհասկանալի է ներառական կրթության մասնագետների հաստիքների	

	բացակայությունը հաստիքացուցակում, հատկապես երբ ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը մի քանի տասնյակ է:		